

Առաքեալները կը ներկայացուին նաև ամպերու վրայ նստած, շրջապատելով Փրկիչը՝ երբ կ'ենթադրուէին թէ երկինքի մէջ են:

Բ. Երբ Աւետարանիչները միասին կը ներկայացուին, ան իրենց վկայութեան նկարագիրն է, որ կը հաստատէ քրիստոնէութեան ճշմարտութիւնը. երբ անոնք առանձին են, սովորաբար կը ներկայացուին իբր ուսուցիչներ կամ պաշտպաններ: Աւետարանիչներուն հնագոյն խորհրդանշանն է յունական խաչ մը, իւրաքանչիւր անկեան մէջ թղթապատատ մը կամ գիրք մը — չորս Աւետարանները գրողներուն խորհրդանշանը: Երկրորդն է չորս գետերը որ կը բլխին դրախտէն: Երբեմն Փրկիչը գառնուկով մը կամ Գառն Աստուծոյ խորհրդանշանով կը ներկայացուի բարձր տեղ մը, ուր չորս գետեր կը հոսին՝ խորհրդանշելով Աւետարանիչները: Եզեկիէլի տեսիլքին (Եզեկ . Ա . 5) չորս կենդանիներն ալ խորհրդանշան են Աւետարանիչներուն: Հրեաները կը մեկնաբանեն թէ անոնք հրեշտակապետներն են, նաև մարգարէները՝ Եսայի, Երեմիա, Եզեկիէլ և Դանիէլ, բայց հին քրիստոնեաները գոհունակութեամբ կը բացատրեն իբր խորհրդանշան Աւետարանիչներուն:

Յայտնութեան «չորս կենդանիները» ունին միևնոյն բացատրութիւնը, և է. դարէն սկսեալ որոշ խորհրդանշաններ եղած են սոյն ներշնչեալ վկայութեան:

Յերոնիմոս իր անհատական կարծիքը կը յայտնէ այս խորհրդանշաններու մասին հետեւեալ կերպով.

Ա. — Այն քերովբէն որ առաւելապէս մարդու կը նմանի՝ կը տրուի Ս . Մատթէոսի, վասնզի ան կը խօսի առաւելապէս Փրկչին մարդկային բնութեան վրայ քան թէ աստուածային բնութեան: